# Ավետիք Իսահակյան

## Սերոբի հիշատակին

Ոսկե գազաթը բանձրիկ Նեմրութա
Վա՛ռ-վա՛ռ կրշողա մեջ Վանա ծովուն.
Ազիզ անունդ, քաջ Սերոբ-փաշա,
Ալմաստով փելուն մեջ մեր սրտերուն.
Թո՛ղ արարքներուդ արժանի գովքն էլ՝
Խղճուկ գուսանիս անզարդ երգերում
Ջինջ աղբյուրի պես գլա, գլգլա…

Նեմրութա սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթա.
Մենակ սերոբի աղբյուրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա-
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարավ ժողովրդի սրտի մեջ կերթա…

Նեմրութա սարը քառսուն ժեռ ունի,
Քառսունի գլխուն մարմար քարափ կա. –
Էն քարփի վրա արծիվն է նստեր –
Ժեռերի արքան իր գահի վրա,
Ու կտուցի մեջ մի սիրտ է բռներ,
Եվ զիլ կը կանչե, չորս դին ձեն կուտա
Սարերի արքան ամպերի վրա…
- «Է՜յ, ականջ արե՛ք, հովե՜ր ու հավքե՜ր,

Կտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մեջ, -
Սիրտը, որ ձեգնեն բանձրանց կթոներ:
Է՜յ, ականջ արե՛ք, սարե՛ր ու ձորե՛ր,
Սերոբ-փաշայի սիրտն է կըտցիս մեջ, -
Սիրտը, որ ձեգնեն մեծ էր ու խորն էր:
Սերոբ-Աղբյուրը ազատ նեմրութից
Աղբյուրի նման վազեց լեռն ի վայր
Ու հեղեղ դառավ, ահ ու մահ սփռեց,
Ջարկեց ու ջարդեց հայու դուշմանին՝
Քուրդին ու թուրքին հարո՛ւր ու հազա՛ր:
Ա՜խ, քուրդն ու թուրքը վախկոտ են, նամարդ,
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ.
Փաշա, փատիշահ աղվես են, նամարդ,
Սիրտ չունին կռվել ճակատ առ ճակատ:
Յոթ տարի բոլոր ետևեդ ընկան,
Շվաքդ տեսան, յոթը ծակ մտան.
Վերջն հազար դավով, հազար խաղերով
Ընկար, քա՜ջ Սերոբ… Ու երբ դուն ընկար,
Ես եկա, հասա, սիրտդ հանեցի,
Որ գեշ դուշմանին փայ-բաժին չըլնի:
Իգիթ սիրտը քաջ սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում՝ լո՛ւյս կուտա,
Ու քարերում, սև հողերում
Թեկուզ թաղեմ՝ չի մարի, -
Սուրբ վաթանի, ազգի սիրուն
Չուր հավիտյան չի մարի:
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում բո՛ց կուտա.
Սարի սառույց, ձյունների մեջ
Թեկուզ թաղեմ՝ չի սառի,
Ժողովրդի ազատ օրվա,

Պատվի սիրուն՝ չի սառի,
Չուր հավիտյան չի սառի»…
Նեմրութա սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթա.
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա,
Ազատ օրերի, դալար օրերի

Ծարավ վաթանի սրտի մեջ կերթա…

1899